

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2021 թվականի փետրվարի 12-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 11^ա դասարանի ծնողական ժողովը:

Ժողովին ներկա էին բոլոր ծնողները:

Ժողովը վարում էր դասղեկ Լուսինե Ազարյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

- 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփում.
2. Ընթացիկ հարցեր (կարգապահություն, վարք և այլն):

1. Լսեցին.- 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփման հարցը:

Դասղեկ Լուսինե Ազարյանը ամփոփ ներկայացրեց դասարանի 1-ին կիսամյակի արդյունքները: Դասարանի առաջադիմությունը 100 % է, ունեն 8 հարվածային աշակերտ՝ Ալեքսանյան Նելլի, Բադալյան Սվետլանա, Գալստյան Նարե, Գրիգորյան Նարե, Մարկոսյան Գոռ, Սամսոնյան Տիգրան, Հովհաննիսյան Միլենա, Սարգսյան Միլենա:

Աշակերտների բացակայությունը կազմում է 21 ժամ:

Դասղեկը հետևողական է եղել հաճախումների, դասագրքերի վիճակի ստուգման, համազգեստի, նրա պահպանման, ինչպես նաև դասարանի սանիտարական վիճակի ու գույքի պահպանման հարցում:

Առաջին կիսամյակի արդյունքներից կախված կլինի նաև նրանց երկրորդ կիսամյակի որակական ցուցանիշը:

Ձեկուցողը նշեց նաև ուսման մեջ հետ մնացող բոլոր աշակերտների անունները, նրանց վարքի դրսևորման, ավագների աշխատանքի արդյունքները, տվեց դասարանի ծնողական և աշակերտական խորհուրդների աշխատանքի համառոտ ամփոփագիրը:

Որոշեցին՝

Ուժեղացնել դասարանի աշակերտների նկատմամբ հսկողությունը սովորելու հարցում ծնողների կողմից և ամեն գործում օգնել դասղեկին:

2. Լսեցին.- Ընթացիկ հարցեր (կարգապահություն, վարք և այլն):

Դասղեկ Լ. Ազարյանն իր խոսքում նշեց, որ դասարանի աշակերտները համախմբված են , հիմնականում վարքային խնդիրներ չեն լինում, փոխադարձ հարգանքի և

1.Նարինե Բադալյանը տղաների կարգապահության ու վարքի մասին նշեց, որ նրանք վաղվա զինվորներն են ու ծառայելու են հայոց բանակում: Որքան բարձր լինի նրանց մակարդակը, այնքան հեշտ կլինի ծառայությունը, իսկ զինվորի առաջին քայլն արվում ու սկսվում են դպրոցից:

1. Մտղխորհրդի նախագահ Մարինե Թարոյանը առաջարկեց ուժեղացնել դասարանում կատարվող բոլոր աշխատանքների հսկողությունը ծնողերի կողմից և ամեն հարցում հենարան լինել դասղեկին:

Որոշեցին՝

Ստուգել երեխայի ամենօրյա դասապատրաստումները (տնային և գործնական աշխատանքների կատարում):

Քննարկվեցին նաև ընթացիկ հարցեր՝ կապված աշակերտների կուլտուրական մակարդակի բարձրացման, գիտելիքների զարգացման և այլ խնդիրների լուծման հետ (կոլեկտիվ կինոդիտում, այցելություն թանգարաններ ու թատրոններ, ներդպրոցական միջոցառումներ և այլն):

Բոլորն էլ հավաստեցին, որ սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում մեծ է ծնողների դերը երեխային ուսման մեջ աջակցելու և դպրոցից դուրս նրա օրվա մնացած ժամերի զբաղվածությունը ճիշտ կազմակերպելու հարցում, որովհետև նրանց ամենօրյա անմիջական հսկողությունից և ծնողական պարտքի զգացումից է կախված աշակերտի ուսման նկատմամբ պատասխանատվությունը, օրվա ռեժիմի ճիշտ կարգավորելը: Ուսուցիչն ու ծնողը պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների դաստիարակության և ուսման հիմնախնդիրների լուծման հարցում:

Այս տարիքի երեխաների հետ տարվող աշխատանքում ավելի շատ հայրերը պետք է հետաքրքրվեն ու զբաղվեն: Բացի դասապատրաստումից պետք է հետևել, որ երեխան կատարի լրացուցիչ հանձնարարություններ, զբաղվի հանրօգուտ աշխատանքով, գիրք կարդա և ժամանակ գտնի՝ օգնելու ծնողին տնային գործերում, որովհետև ծնողի օրինակն է երեխայի համար դառնում չափանիշ:

Դասղեկը հորդորեց ծնողներին ճիշտ կազմակերպել երեխաների և՛ ազատ ժամանակի տնօրինումը, և՛ դասապատրաստման գործը. չէ՛ որ այդ ամբողջ ժամանակահատվածում նրանք գտնվում են ծնողների կողքին ու նրանց հսկողության տակ:

Կարևոր է նաև երեխաների հաճախակի այցելությունը մշակութային օջախներ՝ կրթական մակարդակը բարձրացնելու և նոր մարդ ձևավորելու ընթացքը ճիշտ հիմքերի վրա դնելու համար:

Ժողովի նախագահ՝
Քարտուղար՝

_____ (Մ. Թարոյան)
_____ (Լ. Թադևոսյան)